ՄԵ՛ՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՍԱՐԵՐԸ
Զարգացման
գործակալություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2025



ՄԵ՛ՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՍԱՐԵՐԸ
Զարգացման
գործակալություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալություն ՀԿ հիմնադրվել է 2022 թվականի վերջին Ռուբեն Վարդանյանի և նրա գործընկերների կողմից, Արցախում և Հայաստանում զարգացման նախագծեր և ծրագրեր իրականացնելու նպատակով:

2022-2023թ.թ. ադրբեջանական շրջափակման խնդիրներով պայմանավորված, կազմակերպությունը ստիպված էր ջանքերը կենտրոնացնել Արցախում հումանիտար աղետի կանխմանը, բնակչության հրատապ խնդիրների լուծմանը:

2023 թ. սեպտեմբերի 27-ին, Արցախի բնակչության զանգվածային տեղահանման ժամանակ Ռուբեն Վարդանյանը ձերբակալվել է Ադրբեջանի կառավարության կողմից և շարունակում է ապօրինի կերպով կալանքի տակ մնալ Բաքվում: Բանտից նա հորդորել է շարունակել կազմակերպության բարեգործական գործունեությունը և հնարավոր աջակցություն ցուցաբերել բռնի տեղահանված արցախցիներին: Հետևելով կազմակերպության հիմնադրի հորդորին, «Մենք ենք մեր սարերը» շարունակեց օգնություն ցուցաբերել բռնի տեղահանությունից հետո Հայաստանի Հանրապետությունում ապաստանած արցախցիներին:

2023 թ. հոկտեմբերից սկսած՝ «Մենք ենք մեր սարերը» ԶԳ աջակցում է բռնի տեղահանված ընտանիքներին՝ հաղթահարել հոգեկան տրավման, ադապտացվել նոր պայմաններին, կայունացնել ընտանիքների սոցիալական վիճակը: Կազմակերպությունը նաև նպաստում է տեղահանված մարդկանց ներուժի բացահայտմանն ու զարգացմանը Հայաստանում:

Շարունակելով հումանիտար ծրագրերը, կազմակերպությունը ներկայումս շեշտը դնում է երկարաժամկետ ծրագրերի վրա, ներառելով մարդկային կապիտալի և տարածքային ներուժի բացահայտումն ու զարգացումը, մասնավորապես, Սյունիքում:

Ընդհանուր առմամբ, **2022–2025** թվականներին կազմակերպությունն իրականացրել է շուրջ **50 նախագիծ և ծրագիր՝** շուրջ **3 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ**, որոնք ազդել են ավելի քան **100 000 մարդու կյանքի վրա**: Մանրամասն հաշվետվությունները հասանելի են կազմա-կերպության կայքէջում հետևյալ **հղումով**:

2025 թ. կազմակերպությունը կյանքի է կոչել ծրագրեր և նախագծեր՝ ավելի քան **435,000 ԱՄՆ** դոլար արժողությամբ, ինչն ազդեցություն է թողել շուրջ **10 000** մարդու կյանքի վրա Հայաստանի տարբեր շրջաններում:

Ստորև ներկայացվում են իրականացված ծրագրերն ու նախաձեռնությունները՝ հիմնական արդյունքներով, ծախսերի ծավալով, աշխարհագրությամբ և շահառուների թվով:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

«ԹԵՎԵՐ»՝ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Թևեր ստանալու ամենապարզ ձևը՝ թևեր նվիրել նրան, ով դրա կարիքն ունի»

Համատեքստ

2023 թվականի սեպտեմբերին Արցախի բնակչության բռնի տեղահանությունից անմիջապես հետո «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը մեկնարկեց իր առաջին արտակարգ հոգեսոցիալական նախաձեռնությունը՝ **«Թևեր»** վերականգնողական ծրագիրը: Ծրագիրը մշակվել է՝ արձագանքելու պատերազմի, շրջափակման, բռնի տեղահանության և կորստի հետևանքով առաջացած խորքային հոգեբանական ազդեցություններին, որոնք ապրել են հազարավոր երեխաներ և նրանց ընտանիքները: Այն, ինչ սկզբում ձևավորվել էր որպես արագ արձագանք մարդասիրական ճգնաժամին, արդեն երրորդ տարին իրականացվում է շարունակական հիմունքներով:

Հիմնական բաղադրիչները՝

- **Հոգեբանական վերականգնում (36 ժամ)**
  Տրավմայի վրա հիմնված ստեղծագործական թերապիաներ՝ *սթորիթելլինգ, արտահայտչական արվեստներ, դրամաթերապիա, ավազաթերապիա, կավով աշխատանք, դիմակների և մանդալաների պատրաստում, լարային նկարչություն, կոլաժ, ինքնաբուխ նկարչություն, իպպոթերապիա, վստահության զարգացման վարժություններ:*
- **Ֆիզիկական վերականգնում (24 ժամ)**
  սպորտային թերապիա՝ *լող, վոլեյբոլ, ֆուտբոլ, պար, ֆիթնես*
- **Կոգնիտիվ վերականգնում (16 ժամ)**
  Երկօրյա ինտենսիվ ծրագիր*, որի նպատակն է զարգացնել հուզական կարգավորումը, կոնֆլիկտների կառավարումը, հարմարվողականությունը, հաղորդակցման և սոցիալական հմտությունները:*
- **Աջակցություն ծնողներին**
  Հոգեբանական կրթություն*, խմբային և անհատական աջակցություն*
- **Սոցիոմշակութային հարմարվողականություն**
  համայնքային և ինտեգրացիոն ակտիվություններ

Մեթոդիկա և մոտեցում

«ԹԵՎԵՐ»-ը երեքամսյա հոգեսոցիալական աջակցության մոդել է՝ նախատեսված 4–18 տարեկան տեղահանված երեխաների և նրանց ծնողների համար՝ անվտանգության, վստահության և պատկանելության զգացման վերականգնման նպատակով:

Ծրագրի հիմնական ուժը նրա համալիր մոտեցումն է՝ այն միավորում է վերականգնման հոգեբանական, ֆիզիկական, մտավոր և սոցիալական ասպեկտները:

Հաշվետու ժամանակահատվածում մենք ավելացրեցինք կարևոր բաղադրիչ՝ այն համայնքների տեղացի երեխաների մասնակցությունը, որտեղ իրականացվում է ծրագիրը: Այս որոշումը ամրապնդեց ինտեգրացիան, օգնեց հաղթահարել խոչընդոտները և նպաստեց համերաշխ համայնքի ձևավորմանը: Համատեղ պարապմունքները օգնեցին ստեղծել փոխըմբռնման, կարեկցանքի և վստահության տարածք բռնի տեղահանված երեխաների և նրանց նոր հարևանների միջև:

Ծրագրի ընդգրկումը 2025-ին

- **363 երեխա** ավարտել է եռամսյա վերականգնողական ծրագիրը
- **220 ծնող** ներգրավվել է ընտանեկան աջակցության բաղադրիչում
- Ծրագիրն իրականացվել է **6 փուլերով՝ 4 տարածաշրջանում՝** Երևան, Գյումրի, Կապան, Հալիձոր
- Ներգրավվել են նաև **տեղական համայնքների երեխաներ**

Ծրագրի բաշխվածությունն ըստ տարածաշրջանի



Արդյունքների գնահատում

Ծրագրի արդյունքներն ընդգրկում են սոցիալական ինտեգրման բարելավում, ագրեսիվ վարքագծի նվազում, քնի և հուզական ինքնակարգավորման բարելավում, ինչպես նաև ծնողների վստահության աճ երեխաների վերականգնման նկատմամբ: Յուրաքանչյուր մասնակցի հետ կատարվում է գնահատում՝ ծրագրի մեկնարկից առաջ և վերջում: Օգտագործվում է ցուցանիշների համակարգ, որոնցից հիմնականներն են՝ մասնակիցների մոտ անհանգստության, ինչպես նաև նոր միջավայրում հարմարվելու դժվարությունների կրճատումը:



Փոխադարձ հյուրընկալություն և միջհամայնքային կապեր

Ծրագրի շրջանակում կազմակերպվեցին Հալիձորի և Կապանի մասնակիցների **փոխադարձ ճանաչողական այցելություններ**: Կարևոր է, որ ծրագրի մասնակիցներն իրենք էին դառնում միմյանց հյուրընկալողները:

Սա ստեղծեց ջերմ և նշանակալից կապեր Հայաստանի հարավային երկու համայնքների երեխաների միջև, հնարավորություն տվեց վերականգնել կամ վերագտնել բռնի տեղահանությունից հետո կորցրած հարաբերությունները և ամրապնդել համայնքային պատկանելությունը:

Ստեղծագործության վերադարձը

Կապանի մասնակիցներից մեկը ծրագրից այնքան ոգեշնչված էր, որ արհեստական բանականության օգնությամբ ստեղծեց «Թելեր» ծրագրի օրհներգը: Երգը արագ դարձավ ծրագրի մթնոլորտի մաս և այժմ պարբերաբար հնչում է Կապանում իրականացվող միջոցառումների ընթացքում՝ երեխաների և մեծահասակների կողմից ընդունվելով որպես կապի, հույսի և պատկանելության ընդհանուր խորհրդանիշ:

Ստեղծագործելու ցանկությունը տրավմայից ազատման կարևոր ցուցիչ է: Ստեղծագործելով՝ մարդիկ վերականգնում են կապը իրենց ներաշխարհի հետ, վերադարձնում սուբյեկտության զգացումը և արտահայտում այն հույզերը, որոնք դժվար է բառերով փոխանցել:

Ծնողների հետ աշխատանք. դեպքի ուսումնասիրություն Կապանից

Ծնողների հետ աշխատանքը կարևորագույն բաղադրիչ է բռնի տեղահանություն և հոգեկան տրավմա ապրած երեխաներին աջակցելու գործում: Խոսուն օրինակ է Կապանում իրականացված միջոցառումը, որը հատուկ կազմակերպվել էր մայրերի համար՝ միտումնավոր առանց երեխաների, որպեսզի կանայք ունենան հնարավորություն կենտրոնանալու իրենց վրա: Հանդիպումը ներառում էր ստեղծագործական վարպետաց դասեր՝ դեկորատիվ օճառի պատրաստում և ավանդական «Կենաց ծառի» ստեղծում: Այն դարձավ ոչ միայն աշխատարան, այլև թեթևության, կապի և լուռ ուրախության տարածք: Կանայք այնքան ներգրավված էին, որ չէին ցանկանում բաժանվել: Մասնակիցներից մեկը անկեղծացավ.

«Սա իմ կյանքի ամենաերջանիկ օրերից էր»:

Այս փորձը ցույց տվեց, որ նույնիսկ ամենաուժեղ և դիմակայուն մայրերն իրենց մեջ կրում են անտեսանելի հուզական բեռ և խիստ կարիք ունեն պահերի, երբ կարող են շունչ քաշել, ստեղծագործել և վերականգնել իրենց ուժերը: Ծնողներին նման աջակցությունը ուղղակիորեն ամրապնդում է նրանց կարողությունը՝ աջակցել իրենց երեխաներին:

ԾՐԱԳՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ

2025 թ. «Թևեր» ծրագիրն արժանացավ միջազգային գործընկերների ուշադրությանը: Մարտին «Մենք ենք մեր սարերը» գործակալությունն ընդունեց **Մարսելի քաղաքապետարանի պատվիրակությանը**՝ գլխավորությամբ քաղաքապետի առաջին տեղակալ, մասնագիտությամբ բժիշկ՝ տիկին **Միշել Ռուբիրոլայի**, որն Հայաստան էր ժամանել պաշտոնական այցով: Ֆրանսիական պատվիրակությունն այցելեց Երևանի «Ինտրա» հոգեկան առողջության կենտրոն, որտեղ ծանոթացավ «Սատար Արցախին» միության աջակցությամբ իրականացվող «Թևեր» ծրագրի ընթացքին: Հյուրերը ներկա գտնվեցին արտթերապիայի և դրամաթերապիայի սեանսներին, զրուցեցին ծրագրի մասնակից երեխաների հետ և հանդիպեցին ծնողներին՝ լսելու նրանց անձնական պատմությունները:

«Խորապես հուզված եմ՝ տեսնելով ամենը, ինչ արվում է այստեղ օգնելու երեխաներին ու նրանց ընտանիքներին՝ հաղթահարել տրավման, *– նշել է Միշել Ռուբիրոլան: –* ***Մենք կիսում ենք ձեր ցավը և հիանում ենք ձեր ուժով՝ կորուստներից հետո վերականգնվելու մեջ****»:*

Ծրագրում ընդգրկված ծնողները կիսվել են, թե որքան կարևոր է դարձել «Թևեր» ծրագիրն իրենց ընտանիքների համար:

Սյուզաննա Բաղդասարյան, մասնակցի մայր - ***«Մեր երեխաները կորցրել են տուն, ընկերներ և իրենց ծանոթ աշխարհը: «Թևեր» ծրագիրն օգնում է նրանց նորից ժպտալ և երազել: Մենք շնորհակալ ենք, որ գոնե հնարավորություն ունենք հայոց հողում կյանքը վերաիմաստավորելու: Մեր երեխաների աչքերում նորից լույս կա, և դա ամենակարևորն է»:***

«Մեր նպատակը ոչ միայն տրավմայի հետևանքները մեղմելն է, այլև այս ընտանիքներին նոր կյանքի հիմքեր տալը: Այս այցը կարևոր է ոչ միայն որպես համերաշխության դրսևորում, այլև որպես հաստատում այն իրողության՝ որ Արցախի ժողովրդի խնդիրները դա մարտահրավեր է ողջ մարդկության համար»:

Գրիգորի Մարտիրոսյան
«Մենք ենք մեր սարերը» ԶԳ գլխավոր տնօրեն

ԴՈՆՈՐԻ ԱՅՑ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԵՏ

2025 թ. գարնանը **«Սատար Արցախին»** միության(Ֆրանսիա) ներկայացուցիչներն այցելեցին Հայաստան՝ ծանոթանալու «Թևեր» ծրագրի ընթացքին: Պատվիրակության անդամները եղան Գյումրիում, Երևանում և Տաթևում հանդիպելով ծրագրի շահառու երեխաներին և ծնողներին: Նրանք նաև քննարկեցին ծրագրի մեթոդաբանությունը մասնագետների հետ: Սա հնարավորություն տվեց ավելի խորապես հասկանալու տեղահանված ընտանիքների կարիքները, ամրապնդելու գործընկերությունը և պլանավորելու հետագա անելիքները:

Հիմնական մարտահրավերները և արձագանքման քայլերը

- Չնայած «Թևեր» ծրագրի ապացուցված արդյունավետությանը՝ **հոգեսոցիալական աջակցության պահանջարկը բռնի տեղահանված ընտանիքների շրջանում շարունակում է մնալ բարձր**:
- **Առկա ֆինանսական հնարավորություններով** հնարավոր է ընդգրկել մոտավորապես **յուրաքանչյուր 30-րդ բռնի տեղահանված երեխային,** որը նման աջակցության կարիք ունի:
- Նոր խմբերի գրանցումը բացվելուն պես բոլոր տեղերը լրացվում են մի քանի րոպեների ընթացքում, ինչի հետևանքով **ձևավորվում են երկար սպասման ցուցակներ**:

«Թևեր» ծրագիրը պարզապես արձագանք չէ ճգնաժամին, այլ ներդրում է ամբողջ սերնդի հոգեբանական ապագայի մեջ:

Հայացք ապագային

Ծրագրի առաջիկա քայլերը ներառում են.

- ընդլայնում նոր տարածաշրջաններում,
- ազդեցության մոնիթորինգի և գնահատման գործիքների ամրապնդում,
- հիմնական արդյունքների և մեթոդաբանության հրապարակում մասնագիտական հանդեսներում նմանատիպ պայմաններում աշխատողների համար:

Հիմնական գործընկերներ և աջակիցներ

Ծրագիրն իրականացվեց շնորհիվ «Մենք ենք մեր սարերը» կազմակերպության աջակիցների վստահության և ֆինանսական ներդրումների, հոգեկան առողջության ոլորտի մասնագետների և փորձառու տեղական կազմակերպությունների հետ գործընկերային աշխատանքի միջոցով ապահովելով բարձր արդյունավետություն:

Յուրաքանչյուր մարզում մենք աշխատեցինք իրենց գործին նվիրված մասնագետների հետ, որոնք կիրառում էին բազմազան մեթոդներ՝ հիմնված տրավմային տեղեկացված մոտեցման վրա:

ՄԵՐ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝

Գործընկերներին՝

- **«Ինտրա» հոգեկան առողջության կենտրոն, Երևան**
- **«Արեվամանուկ» հոգեբանասոցիալական աջակցության հիմնադրամ, Գյումրի**
- **Տաթեվի համայնքային կենտրոն**
- **«IDeA» բարեգործական հիմնադրամ, Գյումրի**
- **«Oogway» սուպերհերոսների դպրոց**
- **«Ակվատեկ» սպորտային համալիր, Երևան**
- **Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա**
- **«Ինսպորտ», Սյունիք**
- **«Լիգա ինշուրանս»**

Աջակիցներին՝

- **Ոզնիների այգի**
- **Տաշիր արենա**
- **«НАШЕ ДЕЛО» հիմնադրամ (ՌԴ)**
- **«ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ**

ԵՎ ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ

Սրտանց շնորհակալություն ենք հայտնում «Association de Soutien à l'Artsakh» (Ֆրանսիա), «Saint Sarkis Charity Trust» (Մեծ Բրիտանիա) կազմակերպություններին և մեր բոլոր ընկերներին ու գործընկերներին, ովքեր հավատում են հոգատարության և վերականգնման ուժին:

Նրանց աջակցությամբ Արցախի երեխաներն ու ընտանիքները կարողացան ստանալ անհրաժեշտ օգնությունը և ստանալ հույս ապագայի նկատմամբ:

«ԹԵՎԵՐ՝ ԲՈԼՈՐԻՆ»
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԱԹԵՎԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ

2025 թվականին «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը Տաթև համայնքում իրականացրեց **ԹԵՎԵՐ՝ԲՈԼՈՐԻՆ** ծրագիրը՝ ուղղված Արցախից բռնի տեղահանված ընտանիքների և Տաթևի տեղացի բնակիչների տնտեսական կարողությունների ամրապնդմանը: Ծրագիրը ձևավորվել է որպես հաջորդ փուլ «Թևեր» հոգեսոցիալական ծրագրից հետո՝ վերականգնումից դեպի կայուն զարգացում անցման տրամաբանությամբ:

ԹԵՎԵՐ՝ԲՈԼՈՐԻՆ-ը պատասխան էր երկու փոխկապակցված մարտահրավերի՝

- Արցախցի ընտանիքների՝ բռնի տեղահանությունից հետո նոր կյանք կառուցելու անհրաժեշտությանը,
- Սյունիքում տնտեսական սահմանափակ հնարավորություններին և զբաղվածության պակասին:

Ծրագիրը նպատակ ուներ ոչ միայն **տրամադրել աջակցություն**, այլև **ստեղծել հնարավորություններ՝** կենտրոնանալով ընտանեկան ձեռնարկատիրության, երիտասարդների ներգրավման և համայնքային համախմբման վրա:

Մոտեցում և իրականացում

Ծրագիրն իրականացվել է «Մենք ենք մեր սարերը» ԶԳ կողմից՝ **Ինոբիզ ՀԿ-ի**, **Տաթևի համայնքային կենտրոնի** և **Տաթևի համայնքապետարանի** հետ սերտ համագործակցությամբ:

Ծրագիրն իրականացվել է Հ. Հովնանյան Ընտանեկան Հիմնադրամի դրամաշնորհով, ԱԿԲԱ ֆեդերացիայի և Արարատ Բանկի ֆինանսական աջակցությամբ:

Ծրագիր՝ ստեղծված ընտանիքների և ոչ թե անհատների համար

ԹԵՎԵՐ՝ԲՈԼՈՐԻՆ ծրագրի առանցքային առանձնահատկությունը ընտանիքահեն մոտեցումն էր. ծրագիրը միաժամանակ ներգրավում էր **ծնողներին և դեռահասներին՝** համատեղ սովորելու, որոշումներ կայացնելու և ձեռնարկատիրական գաղափարներ զարգացնելու նպատակով: Սա թույլ տվեց համադրել մեծահասակների փորձն ու երիտասարդների թվային և ստեղծագործական հմտությունները:

Հիմնական բաղադրիչներ

- 6-ամսյա ձեռնարկատիրական ուսուցում և մենթորություն
- Գաղափարների գեներացում, շուկայի ուսումնասիրություն, թվային մարքեթինգ, ֆինանսական գրագիտություն
- Կրթական փոքր դրամաշնորհներ գաղափարների փորձարկման համար
- Փիչինգ և մեկնարկային ֆինանսավորում
- Երիտասարդների առաջնորդության զարգացում
- Համայնքային միջոցառումներ և ուսումնական այցեր
- Տեղական մարզիչների պատրաստում

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԸՆԴԳՐԿՈՒՄ

- Ստացվել է **74 դիմում**
- **59 մասնակից ակտիվորեն մասնակցել է** ծրագրին:
- **43 մասնակից ավարտել է** ամբողջական ցիկլը:
- Մասնակիցների **58%-ը կանայք են**, **61%-ը՝ մինչև 30 տարեկան երիտասարդներ**:
- **12** մասնակից եղել է **Արցախի բռնի տեղահանված ընտանիքներից**:
- Մշակվել է **37 բիզնես մոդել՝** մեղվաբուծության, արհեստների, սննդարտադրության, ագրոտուրիզմի, գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտներում:
- **30 մասնակից** ստացել **է 330-ական ԱՄՆ դոլար կրթաթոշակ** գաղափարների փորձարկման համար:
- Ներկայացվել է **29 դրամաշնորհային հայտ**, որոնցից ընտրված **12**-ը ստացել են **մինչև 1 մլն ՀՀ դրամ ֆինանսավորում՝ ԱԿԲԱ Ֆեդերացիայի և ԱՐԱՐԱՏ Բանկի աջակցությամբ**:
- Իրականացվել է **մենթորություն՝** ավելի քան **120 ժամ** :
- Պատրաստվել է **9 տեղական մարզիչ՝** ծրագրի շարունակականությունն ապահովելու համար:

ԹԵՎԵՐ՝ ԲՈԼՈՐԻՆ

Ոչ միայն ծրագիր, այլև՝ կրկնելի զարգացման մոդել:

Ուսումնական այցեր

Բացի հիմնական ուսուցման և մենթորության բաղադրիչներից, **ԹԵՎԵՐ ԲՈԼՈՐԻՆ**-ը ներառել է չորս համայնքային միջոցառում և մի շարք ուսումնական այցեր՝ ուղղված գործնական գիտելիքների խորացմանը և համայնքային ներգրավվածության ամրապնդմանը:

Այց Մարգահովիտ

- Երկօրյա մասնագիտացված դասընթաց **«ՄեղվաբուծությանԴարբնոց»** կրթական կենտրոնում
- Շրջայց՝ **«Էյ Թի Փի»-ի բնապահպանական կենտրոնում**
- Փորձի փոխանակում **«Սիմոնա» Ազնվամորու այգում**

Մասնակիցների հետհարցումների արդյունքները

- **89%-ը** բարձր է գնահատել **ձեռնարկատիրական հմտությունների զարգացումը**
- **85%-ը** նշել է **առաջնորդական վստահության աճ**
- **89%-ը** հայտնել է **ձեռնարկատիրական գործունեությունը շարունակելու պատրաստակամություն**
- **89%-ը** նշել է **համայնքային կապերի ամրապնդում**

ՄԵՐ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

Մերի Պապյան

«Մինչ ծրագիրը, թվում էր, թե ամեն ինչ գիտենք... բայց դասընթացի ժամանակ պարզվեց, որ շատ բան պետք է սովորենք. եթե նախկինում շատ հեշտ էի պատկերացնում ջերմատան գործը՝ մտածելով, որ կարելի է պարզապես սերմը գցել հողը ու ստանալ բերք, ծրագրի ընթացքում հասկացա, որ ամեն ինչը պետք է մանրամասն հաշվարկվի և ճիշտ կառավարվի: Հիմա ոգևորությունս շատ մեծ է: Ստացած դրամաշնորհով կլուծեմ ջերմատան ծածկի և ջեռուցման խնդիրները: Իսկ առաջիկայում նախատեսում եմ նաև ջերմատունը հագեցնել նորարարական լուծումներով, ինչպես նաև նոր մշակաբույսերով:»

Նորայր Աբգարյան

«Արցախում 15 տարի զբաղվել եմ մեղվաբուծությամբ, մեղուներիս թիվը 3-ից հասցրել էի 85-ի: 2020թ. պատերազմի և Արցախից մասսայական տեղահանության հետևանքով կորցրել եմ ամբողջը: Տեղահանությունից հետո հիմնվելով Տաթևում, զրոյից սկսեցի մեղվափեթակների արտադրությունը: «Թևեր բոլորին» ծրագրին դիմել եմ այս նոր արտադրությունս ընդլայնելու նախագծով: Ստացված դրամաշնորհը մեծ աջակցություն է մեր արտադրամասին: Որոշել ենք ձեռք բերել նոր տեխնիկա: Այն կօգնի աշխատանքն ավելի արդյունավետ կազմակերպել»:

Մարտիկ Գասպարյան

«Թևեր՝ բոլորին» ծրագիրը մեզ տվել է առաջին հերթին՝ ճիշտ բիզնես-պլան կառուցելու հմտություն և մասնագիտական խորհրդատվություն: Ծանոթացանք նորարարություններին, նոր տեխնոլոգիաներին: Կարևորում եմ Մեղվադարբնոցի մասնագետների հետ շփումը: Կոնկրետ ինձ շատ հարցերում է օգտակար եղել այս ծրագիրը: Հիմնական հարցերս եղել են մեղվի վաճառքի, մեծ ու փոքր շուկաների հետ աշխատելու խնդրի, ամենակարևորը՝ փաթեթավորման, էկոմեղրի ստեղծման, մայրերի արհեստական բուծման վերաբերյալ:

«ԿԵՆԱՑ ԾԱՌ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ

Ձգտելով համախմբել հանրությանը հոգևոր արժեքների շուրջ և վերականգնելով դեպի Տաթևի վանք պատմական ուխտագնացության ավանդույթը, «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը, Հայ առաքելական եկեղեցու օրհնությամբ և հայկական բարեգործական մի շարք կազմակերպությունների հետ համագործակցությամբ, 2025 թ. մայիսի 31-ին կազմակերպեց դեպի Տաթևի վանք երկրորդ ամենամյա ուխտագնացությունը, որպես շարունակություն 2024-ի մայիսին մեկնարկած «Կենաց ծառ» նախաձեռնության: Ուխտագնացությանը միացել է ավելի քան **2000 հոգի**:

Տաթևի վանք երկրորդ ուխտագնացությունը կենտրոնացել է՝

- Հոգևոր և ազգային վերածննդի, արմատների և ավանդույթների հետ կապի արժեվորման վրա,
- Տաթևի պատմական և մշակութային ժառանգության պահպանման վրա,
- Հայ գերիների ազատ արձակման պահանջի շուրջ հանրային համախմբման վրա,
- Տաթևի զարգացման նախաձեռնությունների շարունակման վրա:

Ուխտագնացության համակազմակերպիչներն են

- Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը
- «Ազնավուր» հիմնադրամը
- «Սատար Արցախին» միությունը (Ֆրանսիա)
- ԴԱՐ տարածաշրջանային զարգացման և մրցունակության հիմնադրամը
- IDeA բարեգործական հիմնադրամը
- Հայ Օգնության Միությունը
- Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամը
- ՆԻՅՐ ԻՍԹ ՖԱՈՒՆԴԵՅՇՆ-ի Հայաստանյան մասնաճյուղը
- «Օրրան» բարեգործական ՀԿ
- «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամը
- «Թուֆենկյան» ԲՀ
- Տաթև համայնքը

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Ուխտագնացության շրջանակներում, Տաթևի վանքի հազարամյա կամարների ներքո տեղի ունեցավ **արցախցի յոթ երեխաների մկրտության արարողությունը** որպես հույսի և նոր սկզբի խորհրդանիշ:

Այս երեխաներից երեքը ծնվել են Արցախում, շրջափակման օրերին, մյուսները բռնի տեղահանվել են Արցախից մոր սրտի տակ՝ դեռ չծնված:

Մկրտության խաչերը երեխաներին նվիրել է Երևանի «Էմիլ Գրիգորյանի անվան ոսկերչական գործարանը»:

«Վեց ամսական հղի էի, երբ լքեցինք Արցախը: Սեպտեմբերի 23-ին, երբ տեղահանվեցինք Ստեփանակերտից, էն ժամանակ դեռ չգիտեինք, որ իմ մեջ կրում եմ մի փոքրիկ սրտիկ՝ Աստծո օրհնություն... Եվան ծնվել է Սյունիքում, Գորիս քաղաքում:

Անչափ շնորհակալ ենք մեր սիրելի Ռուբեն Վարդանյանին: Մենք ուխտ ունենք, պիտի կատարենք: Ճիշտ է՝ շատ դժվար ճանապարհ ունենք անցնելու, միգուցե մենք չտեսնենք, բայց տա Աստված տեսնենք, մեր երեխաները տեսնեն այն լուսավոր օրը, երբ նրանք կվերադառնան մեր սրտի Արցախը:»

Լուսինե Թովմասյան

ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ

Տաթևի վանքի Սուրբ Պողոս-Պետրոս տաճարում ուխտագնացության մասնակիցները միացան **համատեղ աղոթքին**, որը գլխավորում էր Սյունյաց թեմի առաջնորդ Մակար եպիսկոպոս Հակոբյանը: Աղոթքը նվիրված էր **Բաքվի բանտերում պահվող հայ գերիների ազատ արձակմանը:**

«Հանրային աջակցության մասնավոր մի դրսևորման ականատես ենք լինում այսօր, ինչը ոգեշնչող է: Գործընթացների մասին իրազեկումը կամ սովորական սրտացավությունը, կիսվելը հանրային տիրույթում ունի մեծ նշանակություն, և այն կարող է բազմապատկման էֆեկտով ազդել միջազգային հանրության կարևոր դերակատարների, որոշում կայացնող քաղաքական գործիչների վրա:»

Սիրանուշ Սահակյան, «Իրավական ուղի» հասարակական կազմակերպության համահիմնադիր

«Այսօրվա մեր ուխտագնացությունը՝ դա ճանապարհ է, որի ընթացքում մենք հիշում և աղոթում ենք բոլոր այն հայրենակիցների համար, ովքեր մինչև հիմա գտնվում են գերության մեջ, Բաքվի բանտերում: Առաջի հերթին ուզում եմ հիշել Ռուբեն Վարդանյանին, որովհետև իր անունն անբաժանելի է Տաթևի պատմությունից. Ռուբենը տարիներ առաջ սկսեց մի մեծ ծրագիր, որը վերաիմաստավորեց ոչ միայն Տաթևի ճարտարապետական վերածնունդը, այլև՝ հոգևոր, այլև՝ հանրային, և դա իր էությամբ հանդիսանում է շարունակություն մեկենասության ավանդույթի, որը դարերի պատմություն ունի:»

Գրիգորի Մարտիրոսյան,
«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության գլխավոր տնօրեն

ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

«Կենաց ծառ» նախաձեռնության շրջանակներում ստեղծվել է **«Արմատների պահապանների շրջան»** ճարտարապետական կոմպոզիցիան՝ բաղկացած ճարտարապետական բետոնից պատրաստված տասներկու մոնումենտալ նստարաններից, որոնք դասավորված են «Կենաց ծառի»՝ 2024 թվականի առաջին ուխտագնացության ժամանակ տնկված տնջրի(չինարի) ծառի շուրջ: Յուրաքանչյուր նստարան նվիրված է հեղինակավոր հայկական բարեգործական կազմակերպություններից մեկին, որի աշխատանքը սնուցում և ամրապնդում է ժողովրդի ոգին:

Նստարաններին կպցված են նախաձեռնությանը միացած կառույցների՝ «Ազնավուր» հիմնադրամի, Հայ Օգնության Միության, Հայկական բարեգործական ընդհանուր միության, Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ (IDeA) բարեգործական հիմնադրամի, Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամի, «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի, ԴԱՐ տարածաշրջանային զարգացման եւ մրցունակության հիմնադրամի, «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության, «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության անուններով պղնձե ցուցանակները:

«Արմատների պահապանների շրջան»-ը խորհրդանշում է հայկական բարեգործական կազմակերպությունների ներդրումը հայ ժողովրդի՝ սերնդե-սերունդ փոխանցվող ավանդույթների և հոգևոր արժեքների պահպանման գործում:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԶԻԹՀԱՆՈՒՄ

Ուխտագնացության շրջանակներում ներկայացվել է **«Մեկենասների ոսկե շղթա. Տաթևի պահապանները դարերի ընթացքում»** ցուցահանդեսը: Այն պատմում է Տաթևի վանքի անցած բարդ ու փորձություններով լի ճանապարհի մասին, արժևորելով Տաթևի պահապանների ավանդը՝ Սյունյաց իշխաններից մինչև ժամանակակից բարերարներ:

Պատմագիտական նյութերի վրա հիմնված 12 ցուցապաստառների միջոցով ներկայացվեց հայ բարեգործության հազարամյա ավանդույթը՝ ցույց տալով, թե ինչպես են IX դարից սկսած Սյունյաց իշխանները, Օրբելյանների տոհմը, վարդապետ-գիտնականները, նվիրյալ եպիսկոպոսներն ու վանահայրերը, մելիքական տները, առաջադեմ արդյունաբերողները և ժամանակակից բարերարները պահպանել, վերակառուցել և վերածնունդ տվել Տաթևի վանական համալիրին:



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«ՄԵՆՔ» ազգային պարի խումբ

Արցախի պարի պետական համույթ

«ԿԵՆԱՑ ԾԱՌ» տրիո

«ԵՐԵՎԱՆԻ ՁԱՅՆԵՐ» երգչախումբ

Արմատներին վերադարձի միջոցառումը ուղեկցվել է ազգային մշակույթի ներկայացմամբ և հայկական ավանդական հարիսայի հյուրասիրությամբ:

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուխտագնացությունը պարզապես ճանապարհ չէ, այլ իմաստալից հոգևոր գործողություն: Այն խորհրդանշում է մեր ներքին մաքրագործման, մեր պատմության գիտակցման և հավատքի ամրապնդման ձգտումը: Այն միավորող գործողություն է, որը մեզ կապում է մեր նախնիների, մեր մշակույթի և ավանդույթների հետ և արտահայտում է ապագան ամուր հոգևոր ու պատմական հիմքի վրա կառուցելու մեր վճռականությունը:

Սրտանց շնորհակալություն ենք հայտնում՝

- Բոլոր ուխտավորներին, ովքեր միացան մեզ և կիսեցին հավատքի, հիշողության և միասնության այս ուղին:
- Բոլոր կազմակերպություններին և անհատներին, ովքեր աջակցեցին ուխտագնացության կազմակերպմանը:

«ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԱՐՑԱԽԸ». ԱՐՑԱԽԻ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ

Արցախի բնակչության զանգվածային տեղահանությունից հետո ոչ միայն մարդիկ, այլև նրանց ոչ նյութական մշակութային ժառանգությունը՝ լեզուն, բանավոր ավանդույթները, արհեստները և ծեսերը, հայտնվել են մոռացության և ոչնչացման վտանգի տակ: Մշակութային կորստի այս մարտահրավերը դիմագրավելու նպատակով ստեղծվել է **artsakhian.org** էլեկտրոնային հարթակը՝ ***Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան*** կողմից տրամադրված դրամաշնորհով:



ԱՐՑԱԽՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԹՎԱՅԻՆ ՏՈՒՆԸ

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետազոտական, արխիվային նյութերի հավաքագրման, փաստաթղթավորման, բովանդակային բաժինների կառուցման, ինչպես նաև թվային հարթակի տեխնիկական ստեղծման աշխատանքներ:

Ընդհանուր առմամբ հավաքագրվել և թվային հրապարակման է պատրաստվել Արցախի ՈՆՄԺ ավելի քան 10,000 էջ նյութ: Դրանք հարթակում ներկայացվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ ոչ նյութական մշակութային ժառանգության դասակարգման հինգ հիմնական բաժիններով.

- Բանավոր ավանդույթներ և արտահայտություններ
- Կատարողական արվեստներ
- Սոցիալական պրակտիկաներ, ծեսեր և տոնակատարություններ
- Բնության և տիեզերքի մասին գիտելիքներ և պրակտիկաներ
- Ավանդական արհեստներ

«Էլեկտրոնային հարթակը լինելու է համահայկական տարածքի արցախյան այն անկյունը, որի առաքելությունը մի կողմից՝ կենսատարածքից կտրված Արցախի բարբառը, ազգագրական և բանահյուսական մեծարժեք ժառանգությունը պահպանելը և այն ճանաչելի դարձնելը պիտի լինի, մյուս կողմից՝ բնատարածքից զրկված արցախցիների ինքնության լիցքը և հայրենիքի հետ կապն ու տունդարձի հավատը նորոգ պահելը»

Լուսինե Մարգարյան,

Էլեկտրոնային պլատֆորմի բովանդակության կառավարիչ

Ակնկալվում է, որ այս էլեկտրոնային հարթակը կդառնա Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման գլխավոր պահոցը, կծառայի որպես կարևոր ռեսուրս համալսարանների, դպրոցների և հետազոտական կենտրոնների համար, կօգնի Հայաստանում և սփյուռքում ապրող արցախցիներին պահպանել իրենց ինքնությունը: Հարթակը կբարձրացնի Արցախի հարուստ և բազմաշերտ մշակութային ժառանգության ճանաչելիությունը Հայաստանում և միջազգային մակարդակում՝ այն ներկայացնելով որպես համաշխարհային մշակույթի անբաժանելի մաս:

Միաժամանակ այս հարթակը լայն հնարավորություններ է բացում Արցախի մշակութային ինքնության ներկայացմանն ուղղված նորարարական գաղափարների իրականացման համար: Այն դառնում է ստեղծագործական համագործակցության տարածք, որը միավորում է տարբեր բնագավառների մասնագետների, համայնքների և կազմակերպությունների ջանքերը՝ մշակութային ժառանգությունը ոչ միայն պահպանելու և արդիականացնելու, այլև վերաիմաստավորելու նպատակով:

Խորին երախտագիտություն ենք հայտնում «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկությանը՝ արցախյան մշակույթի պահպանման խնդիրը որպես առաջնահերթություն ընդգծելու և էլեկտրոնային հարթակի ստեղծմանն աջակցելու համար:

ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Ծրագրի շրջանակներում հավաքագրվել է Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգությանն առնչվող մեծածավալ նյութ (բանահավաքչական, արխիվային, լուսանկարչական, տեսաձայնային), ստեղծվել է artsakhian.org կայքէջը՝ **ամենաանհրաժեշտ հիմնական ֆունկցիոնալությամբ:**

Հետագա քայլերը նախատեսում են՝

1. Դաշտային հետազոտություններ և համայնքային աշխատանքներ

- Շարունակել ազգագրական դաշտային ուսումնասիրությունները՝ նպատակ ունենալով տեղահանված արցախյան համայնքներում իրականացնել բանավոր մշակութային ժառանգության գիտական հավաքագրում, գրանցում և փաստագրում
- Հավաքագրել և գրանցել Արցախի ՈՆՄԺ վտանգված շերտերը

2. Հարթակի լիարժեք գործարկում

- Հավաքագրված նյութը մշակել հրապարակման համար
- Ավարտել artsakhian.org կայքի կոդավորումը և բովանդակության ինտեգրումը
- Ստեղծել ինտերակտիվ, բազմալեզու ինտերֆեյս (հայերեն, անգլերեն, ռուսերեն)

3. Հանրային ակտիվացում

- Կազմակերպել մշակութային քննարկումներ, շնորհանդեսներ և համայնքային միջոցառումներ
- Նպաստել հարթակի հանրահռչակմանը լրատվամիջոցների, սոցցանցերի և շահագրգիռ կողմերի միջոցով

Մարտահրավեր

Կայքի լիարժեք գործարկման և զարգացման աշխատանքները պահանջում են ինչպես մասնագիտական, այնպես էլ ֆինանսական նոր ներդրումներ:

ԱՋԱԿՑԵԼ ՀԱՐԹԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

ՖՐԱՆՍԵՐԵՆ՝ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2025 թ. մարտ-հունիս ամիսներին Երևանի **Միսակ Մանուշյանի անվան թիվ 48 հիմնական դպրոցում** սովորող **24 արցախցի երեխաների համար** շարունակվեցին ֆրանսերենի լրացուցիչ պարապմունքները: Ծրագիրը նպատակ ուներ աջակցել այն դպրոցականներին, ովքեր բռնի տեղահանությունից հետո Երևանում ընդունվելով ֆրանսերենի խորացված ուսուցմամբ այս դպրոցը, բախվել էին օտար լեզվի ուսումնառության խնդիրներին:

2020 թ. պատերազմը, բազմակի տեղահանումները, Արցախի երկարատև շրջափակումը և 2023թ.-ին Արցախից բռնի զանգվածային տեղահանումը բացասաբար էին անդրադարձել ոչ միայն երեխաների ֆիզիկական և հոգեբանական վիճակի, այլև նրանց ակադեմիական առաջադիմության վրա:

Այս ծրագիրը մի փորձ էր օգնելու արցախցի դպրոցականներին՝ լրացնել գիտելիքների բացը և հեշտացնել հարմարումը նոր կրթական միջավայրին:

Պարապմունքները անցկացվեցին դպրոցում, երկու տարիքային խմբերի համար՝ 3-5-րդ և 6-9-րդ դասարանների աշակերտների:

Ծրագիրն իրականացվել է **Սատար Արցախին** (Ֆրանսիա) միության աջակցությամբ:

«Երբ ես Արցախից եկա Երևան, ֆրանսերեն ընդհանրապես չգիտեի, ուստի այստեղ սկսեցի զրոյից: Այս պարապմունքները ինձ շատ օգնեցին ծրագիրը յուրացնել և հետ չմնալ: Սովորեցինք ամիսների և օրերի անունները, դերանունները, բայերի խոնարհումները, ժամանակաձևերը... Ինձ շատ դուր է գալիս ֆրանսերենը: Երազում եմ գնալ Ֆրանսիա և տեսնել Էյֆելյան աշտարակը»:

Մարիա Մինասյան, Մ. Մանուշյանի անվան թիվ 48 դպրոցի 5-րդ դասարանի աշակերտուհի

«Անցյալ տարի, երբ մեկնարկեցին արցախցի երեխաների համար ֆրանսերենի լրացուցիչ պարապմունքները, մենք սկսեցինք գրեթե այբուբենից՝ երեխաների մեծամասնությունը ֆրանսերեն ընդհանրապես չգիտեր: Բարեբախտաբար, արդեն առաջին տարում նրանք հաղթահարեցին այդ դժվարությունները: Իսկ այս տարի, պարապմունքները շարունակելով, երեխաները կարողացան ավելի խորացնել իրենց գիտելիքները, ինչը լավ երևում է նրանց առաջադիմությունից»:

Սոնա Կալենջյան, ֆրանսերենի ուսուցչուհի

«ՁՎԱՐՃԱԼԻ ՖՐԱՆՍԵՐԵՆ» ԱՄԱՌԱՅԻՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՃԱՄԲԱՐ

«Ձվարճալի ֆրանսերեն» ծրագիրը մեկնարկել է 2024 թվականին՝ Արցախից բռնի տեղահանված երեխաների համար: Ծրագիրը նախաձեռնվել է որպես շարունակություն «Ֆրանսերեն՝ արցախցի երեխաների համար» ծրագրի, որպեսզի երեխաների՝ ուսումնական տարվա ընթացում ստացած գիտելիքները ամրապնդվեն ամառային արձակուրդի օրերին, հետաքրքիր խաղերի ու ժամանցի միջոցով: Ինտերակտիվ դասերը ճամբարային հետաքրքիր միջոցառումների հետ համատեղելով՝ ծրագիրը ստեղծել է ինչպես կրթական, այնպես էլ հուզական արժեք:

➢ Խաղեր, երգեր և դերային ուսուցման մեթոդներ

Ծրագրի ընդգրկում

- Ծրագրին մասնակցեց **10–15 տարեկան 45 արցախցի երեխա՝** Երևանի տարբեր դպրոցներից:
- Երեխաները բաժանվել են խմբերի՝ **ըստ տարիքի և ֆրանսերենի իմացության մակարդակի**:
- Ծրագրում ընդգրկվել է նաև **Արցախից տեղահանված ֆրանսերենի 2 ուսուցիչ**:

➢ Ճանաչողական էքսկուրսիա՝ Բյուրականի աստղադիտարան և Սաղմոսավանք

➢ Ծրագիրն իրականացվեց հուլիսի 7-ից 25-ը՝ Երևանի «Երազ» ամառային այգում:

➢ Արտթերապիա և Դրամաթերապիա

➢ Ֆրանսերենի ինտերակտիվ դասեր

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ընթացքում երեխաները **հարստացրին իրենց բառապաշարը, զարգացրին խոսակցական հմտությունները, ձեռք բերեցին նոր ընկերներ և վերագտան ինքնավստահությունը:**



ՄԵՐ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

- Շնորհակալություն **«Սատար Արցախին» միությանը՝** «Զվարճալի ֆրանսերեն» ծրագրի իրականացմանը շարունակական աջակցության համար:
- Շնորհակալություն՝ **մեր բոլոր աջակիցներին, այդ թվում՝ կամավորներին, ուսուցիչներին և մասնագետներին՝** իրենց ներդրման և նվիրված աշխատանքի, ինչպես նաև «Երազ» ամառային այգուն՝ տարածքը անվճար տրամադրելու և ջերմ հյուրընկալության համար:

ՀԵՏԱԳԱ ՊԼԱՆՆԵՐԸ

Հաշվի առնելով ծրագրի շահառուներից ստացած դրական արձագանքները, պլանավորում ենք «Զվարճալի ֆրանսերեն» ծրագիրը շարունակել 2026-ին:

Ձեր աջակցությունը հնարավորություն կտա ծրագրում ընդգրկել ավելի շատ երեխաներ:

ԱՋԱԿՑԵԼ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻՆ

Տաղանդավոր երեխաների հայտնաբերումն ու աջակցությունը շարունակում են մնալ մեր գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկը:

«Մենք ենք մեր սարերը» ոգևորությամբ միացավ «Ծնվել եմ Արցախում» կրթական նախաձեռնությանը, որի հեղինակն ու հիմնական իրականացնողը «Արվեստ 23» հասարակական կազմակերպությունն է՝ Պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, UNICEF-ի ազգային դեսպան Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ:

«Ծնվել եմ Արցախում» ծրագիրը հնգամյա համալիր կրթական նախագիծ է՝ ուղղված Արցախից բռնի տեղահանված տաղանդավոր երիտասարդ երաժիշտների մասնագիտական պատրաստությանը: Նախաձեռնությանը միանալով՝ **գործակալությունը կենտրոնացրել է իր ջանքերը ծրագրի մասնակիցներին անհրաժեշտ երաժշտական գործիքներով**՝ ջութակ, թավջութակ, կոնտրաբաս, կլարնետ, շեփոր, դաշնամուր, ինչպես նաև համակարգչային տեխնիկա **ապահովելու վրա**:

«Հովարդ Կարագյոզյան» հիմնադրամի աջակցությամբ ձեռք բերվեցին և արցախցի երիտասարդ երաժիշտներին փոխանցվեցին 23 պլանշետներ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է երաժշտական գործիքներ ձեռք բերել երիտասարդ կատարողների համար, ովքեր բազային երաժշտական կրթություն ստացել են Արցախում: Նրանցից մի քանիսն արդեն նվագում են նվագախմբերում:

Որակյալ գործիքները ոչ միայն նրանց մասնագիտական աճի կարևոր պայման են, այլև կայունության ճանապարհին կարևոր հենարան:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Ծնվել եմ Արցախում» ծրագրի շահառու ընտրված **23 արցախցի երաժիշտներից 15-ը ունեին երաժշտական գործիքի կարիք**: 2025թ. «Մենք ենք մեր սարերը» աջակիցների նվիրատվությունների շնորհիվ **կարողացավ համապատասխան գործիքներ ձեռք բերել նրանցից 7-ի համար**:

ՄԵՐ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

ՆՎԵՐ ԾԱՏՐՅԱՆ

16 տարեկան, թավջութակ

Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոց

«Երբ ձեռքս վերցրեցի նոր թավջութակը, զգացի, որ ինչ-որ մեկը հավատացել է ինձ: Դա ինձ ուժ տվեց առաջ նայելու»:

ԱՆՈՒՇ ԱՂԱՋԱՆՅԱՆ

11 տարեկան, ջութակ

Ալեքսանդր Աճեմյանի անվան երաժշտական դպրոց

«Հիմա նորից հավատում եմ, որ կկարողանամ հասնել իմ երազանքին: Շնորհակալ եմ բոլորին, ովքեր օգնում են ինձ դրա համար»:

ԻՌԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

11 տարեկան, դաշնամուր

Երևանի Ղազարոս Սարյանի անվան արվեստի դպրոց

«Երազում եմ դառնամ Արցախին արժանի զավակ, լավ երաժիշտ, ամեն տեղ իմ բնօրրանի մասին ներկայացնեմ և կարողանամ բարձրաձայն ասեմ Ես ծնվել եմ Արցախում...»

ԼԵՎՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ

13 տարեկան, թավջութակ

Երևանի Ղազարոս Սարյանի անվան արվեստի դպրոց

«Երազանքս է՝ մի օր նվագեմ հայրիկիս հետ Արցախի բեմում»:

ՄԵՐ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

Լիա Բալասանյան
9 տարեկան, դաշնամուր

Կարեն Բալասանյան
15 տարեկան, դաշնամուր

Վադիմ Բալասանյան
17 տարեկան, դաշնամուր

«Ինձ համար մեծ հպարտություն է, որ «Ծնվել եմ Արցախում» ծրագրի 23 երեխաներից 3-ը իմն են: Դա կրկնակի պարտավորեցնող է, որպեսզի նրանք ապացուցեն, որ արժանի էին այս օգնությանը և ամուր բռնեն այն ձեռքը, որն այս դժվար պահին օգնել է իրենց:»

Մերի բալասանյան՝ *Լիա, Կարեն և Վադիմ Բալասանյանների մայր*

«Մեր երեխաների համար երաժշտությունը ոչ միայն զգացմունքների արտահայտում է, այլև անցյալի և ապագայի միջև կամուրջ: Այս ծրագրի շնորհիվ նրանք նորից հնարավորություն ունեն հավատալ իրենց ուժերին և իրենց կոչմանը:»

Նարինե Աղաբալյան, ծրագրի համակարգող

ՄԵՐ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝

Մենք խորին շնորհակալություն ենք հայտնում բոլոր աջակիցներին, ում շնորհիվ երաժշտությունը, հույսը և ոգեշնչումը շարունակում են ապրել արցախցի երիտասարդ երաժիշտների սրտերում:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

Արցախցի 8 շնորհալի աղջիկներ ու պատանիներ դեռ կարիք ունեն երաժշտական գործիքի: Նրանք ունեն Ձեր աջակցության կարիքը:

ԱՋԱԿՑԵԼ

«ԿԱՐԻԵՐԱՅԻ ՆԱՎԻԳԱՏՈՐ» ԿՐԹԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԾՐԱԳԻՐ

2025 թվականի հունիս-օգոստոս ամիսներին «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը՝ **«Դար» կրթական աջակցության բարեգործական հիմնադրամի** աջակցությամբ և **«Սուպերհերոսների դպրոց» կրթական հարթակի** հետ համագործակցությամբ, իրականացրեց **«Կարիերային նավիգատոր»** կրթական կողմնորոշման ծրագիրը: Այն նախատեսված էր Արցախից բռնի տեղահանված 9-11-րդ դասարանի **63 աշակերտների** համար, որոնք հայտնվել էին նոր և բարդ կենսական պայմաններում կանգնած իրենց ապագա մասնագիտական ուղին ընտրելու անհրաժեշտության առաջ:

- ✓ **Բացահայտիր ինքդ քեզ**
- ✓ **Որոշիր ուղղությունդ**
- ✓ **Սահմանիր քո ապագայի կոորդինատները**
- ✓ **Վերցրու ղեկը քո ձեռքը:**

Ծրագիրը ներառում էր տարբեր կրթական ձևաչափեր՝ օֆլայն թրեյնինգներ, ֆինանսական գրագիտության օնլայն հանդիպումներ, այցեր տարբեր ոլորտների կազմակերպություններ, բիզնես-խաղ և եզրափակիչ վարպետաց դաս՝ նվիրված կարիերայի ապագային և արհեստական բանականության դերին:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մասնակիցները ծանոթացան աշխատաշուկայի պահանջներին, ժամանակակից մասնագիտություններին, ֆինանսական կառավարման հիմունքներին, ինչպես նաև զարգացրին ինքնավերլուծության, թիմային աշխատանքի և գիտակցված որոշումների կայացման հմտությունները:

- Ծրագիրը նպաստեց դեռահասների **ինքնավստահության** բարձրացմանը, **սեփական ուժերի և հետաքրքրությունների**ի գիտակցմանը և **ապագայի** նկատմամբ հստակ **կողմնորոշման** ձևավորմանը՝ դառնալով կարևոր քայլ նրանց կրթական և մասնագիտական կայացման ճանապարհին:
- Ծրագրի արդյունքում մասնակիցների **100%-ը ձևակերպեց** իր ցանկալի **մասնագիտական ուղղությունը**՝ առավել հաճախ ընտրելով ձեռներեցության, ստեղծարար ոլորտների, ֆինանսների և ՏՏ ուղղությունները:



ԱՄԱՆՈՐՅԱ ԱՆԱԿՆԿԱԼ ԱՐՑԱԽՑԻ ՓՈՔՐԻԿՆԵՐԻՆ

Տաշիր Արենան ընդառաջեց մեր նախաձեռնությանը և **արցախցի 20-ից ավել փոքրիկներ** իրենց ծնողների հետ անմոռանալի օր անցկացրեցին՝ ներկա գտնվելով «Էթերնիա» կրկեսային շոուին:



«Նաշե դելո» հիմնադրամի աջակցության շնորհիվ կարողացանք հրաշալի ամանորյա նվերներ հանձնել **120** երեխայի՝ Կապանում և Հալիձորում:

Յուրաքանչյուր երեխա ստացավ.

- Թատրոնի կամ կինոթատրոնի տոմս
- Անլար ականջակալներ
- Ստեղծագործական կրթական հավաքածուներ
- Տարիքին համապատասխան խաղեր

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

2025 թվականի առաջին կիսամյակում իր ծրագրային գործունեությանը զուգահեռ՝ «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը ուշադրությունը կենտրոնացրել է **ինստիտուցիոնալ ամրապնդման, միջազգային ներկայացվածության և հանրային նշանակություն ունեցող նախաձեռնություններին մասնակցության** վրա:

Ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում

Near East Foundation կազմակերպության **STRIVE ծրագրի** դրամաշնորհի շնորհիվ գործակալությունը էականորեն ընդլայնել է իր հաղորդակցային և ներկայացուցչական հնարավորությունները: Ծրագրի շրջանակում մշակվել են կազմակերպության գործունեությունը ներկայացնող բազմամեդիա նյութեր, ինչպես նաև արդիականացվել է պաշտոնական կայքը, որն այժմ գործում է չորս լեզվով՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն:

Հատուկ ուշադրություն է դարձվել թվային առաջխաղացմանը. մշակվել է մեկ տարվա SMM ռազմավարություն, որն ընդգրկում է սոցիալական ցանցերում համակարգված աշխատանք, բովանդակության պլանավորում, տեսողական ինքնության ուժեղացում և նոր լսարանների ներգրավում:

Մեր գործունեության լայն ներկայացման նպատակով ստեղծվել է կարճ վավերագրական ֆիլմ գործակալության մասին՝ ցույց տալով հիմնական ուղղությունները, արժեքները և ստեղծման պատմությունը: Բացի այդ, պատրաստվել է հինգ տեսանյութ առանձին ծրագրերի մասին՝ շեշտադրելով մասնակիցների իրական պատմությունները, ձեռքբերումները և տեղական համայնքների վրա ազդեցությունը: Այս նյութերն արդեն օգտագործվում են ինչպես հանրային հաղորդակցության, այնպես էլ գործակալությունը պոտենցիալ գործընկերներին և նվիրատուներին ներկայացնելիս:

Հաղորդակցության ազդեցություն (2025)

Հիմնական արդյունքներ (միայն օրգանական աճ)

Facebook:
- **20,435** հետևորդ
- **1,179,375** դիտում
- **25,000** փոխազդեցություն (+77% աճ՝ 2024-ի համեմատ)
- **32,200** էջի այցելություն (+44.6%)
- **+1,500** նոր հետևորդ (+82%)

Instagram:
- **67,669** դիտում
- **22,100** հասանելիություն (+490% աճ)
- **1,200** փոխազդեցություն (+100% աճ)
- **1,700** պրոֆիլի այցելություն (+445%)

LinkedIn (գործում է 2025 թ. փետրվարից):
- **57,088** դիտում
- **2,241** ռեակցիա
- **407** հետևորդ ընդհանուր (320 նոր՝ վերջին 323 օրում)
- հիմնական աշխարհագրություն՝ Երևան (ՀՀ), Մոնրեալ (Կանադա)

Telegram:
- **16,025** դիտում
- **180** հետևորդ

Ինչ է ցույց տալիս այս պատկերը

- Ուժեղ և մասշտաբվող **տեսանելիություն** (Facebook-ը շարունակում է ապահովել հասանելիության հիմնական ծավալը):
- Ձևավորվել է **կայուն ներգրավվածություն և արձագանք**՝ առանց վճարովի առաջխաղացման (բարձր փոխազդեցություն տարբեր հարթակներում):
- LinkedIn-ը արագ զարգանում է որպես **միջազգային/սփյուռքյան լսարանին հասնելու** և **գործընկերային վստահելիությունը բարձրացնելու** հարթակ:

2026-ի առաջնահերթություններ (հաջորդ քայլեր)

- **Բոլոր հարթակներում տվյալները ներկայացնել միևնույն չափորոշիչներով (դիտումներ / հասանելիություն / էջի այցելություններ)** և հետևել **3 հիմնական ցուցանիշի (KPI)՝**
- **Հասանելիություն / դիտումներ**,
- **Ներգրավվածության մակարդակ**,
- **Փոխարկումներ՝ կայք անցումներ, հարցումներ/կապի դիմումներ, նվիրատվություններ** և/կամ **դիմումներ ծրագրերին**:
- Սահմանել կայուն բովանդակային ռիթմ՝ **Facebook՝ ազդեցության պատմություններ + հստակ կոչ գործողության, Instagram՝ կանոնավոր Reels/Stories, LinkedIn՝ գործընկերություններ + փորձագիտական բովանդակություն**:
- Բարելավել փոխարկումների հաշվառումը՝ **UTM հղումներով** և հստակ կոչերով («Աջակցել / Դիմել / Իմանալ ավելին»)՝ տեսանելիությունը կապելով ծրագրային ներգրավման և ֆինանսավորման հետ:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ ԹՎԵՐՈՎ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ

2025 թվականին «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը, գործընկերների հետ համատեղ, իրականացրել է ծրագրեր և նախաձեռնություններ՝ ընդհանուր ավելի քան **435 000** ԱՄՆ դոլար արժողությամբ (տես աղյուսակը)՝ ազդեցություն ունենալով շուրջ **10,000** մարդու կյանքի վրա Հայաստանի տարբեր մարզերում:

ԾՐԱԳԻՐ*	ԱՄՆ դոլար	ՏԵՂԱՆՔ	ԺԱՄԿԵՏ	ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ	ՈՒՂՂԱԿԻ ՇԱՀԱՌՈՒ
«ԹԵՎԵՐ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ	**173 652**	Դիլիջան Գյումրի Երևան Տաթև Կապան	հունվար-դեկտ	**1,500**	**363 երեխա 220 ծնող**
ԹԵՎԵՐ ԲՈԼՈՐԻՆ. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋՆՈՐԴՎԱԾ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԱՊԱԳԱ ՏԱԹԵՎՈՒՄ	**91 014**	Տաթև	ապրիլ-դեկտեմբեր	**224**	**56**
«TATEV CAVE GARDEN». ՆՈՐ ԾՈՒԿԱ ՏԱԹԵՎՈՒՄ	**18 065**	Տաթև	2025-2026թթ.	**5 000**	**200**
«ԿԵՆԱՑ ԾԱՌ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ	**75 013**	Տաթև	մայիս	**2 000**	**2 000**
ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԱՐՑԱԽԸ. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ	**30 209**	Web-տարածք	հունվար-դեկտեմբեր		
ՖՐԱՆՍԵՐԵՆ՝ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	**2 951**	Երևան	մարտ-հունիս	**90**	**25**
«ՁՎԱՐՃԱԼԻ ՖՐԱՆՍԵՐԵՆ» ԱՄԱՌԱՅԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	**10 050**	Երևան	հուլիս 1-19	**180**	**50**
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻՆ	**9 893**	Երևան	մարտ-դեկտեմբեր	**108**	**23**
ԿՐԹԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԾՐԱԳԻՐ «ԿԱՐԻԵՐԱՅԻ ՆԱՎԻԳԱՏՈՐ»	**14 033**	Երևան	հունիս-օգոստոս	**220**	**63**
ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ	**6 765**	Երևան Տաթև Կապան	սեպտեմբեր-դեկտեմբեր	**168**	**168**
ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ	**3 710**		տարվա ընթացքում		Մենք ենք մեր սարերը ՀԿ
ԸՆԴԱՄԵՆԸ	**435 355**	ՀՀ	**հունվար-դեկտեմբեր**	**9 490**	**3 168**

**Ծրագրերի մասին մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ անցնելով համապատասխան հղումներով:*

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը երախտագիտություն է հայտնում Ռուբեն Վարդանյանի ընտանիքին՝ այս բարդ ժամանակահատվածում կազմակերպությանը ցուցաբերած անգնահատելի աջակցության համար:

Ամբողջ աշխատանքն իրականացվել է շնորհիվ գործակալության համախոհների (նվիրատուների, գործընկերների) լայն շրջանակի անգնահատելի մասնակցության:

Մենք սրտանց շնորհակալություն ենք հայտնում բոլոր նվիրատուներին՝

Ավետ Միրաքյանին, Էդել Հովնանյանին, Հայկ Սաֆարյանին, Գևիկ Բաղդասարյանին, Գառնիկ Մելիքսեթյանին, Ծանթ Մարտիրոսյանին, բոլորին, որոնց անհատական ու խմբային աջակցության և հավաքական ջանքերի վրա են հիմնված մեր ձեռքբերումները.

2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ

IDeA հիմնադրամ
Innobiz բիզնեսի աջակցման ՀԿ
KASA շվեյցարական մարդասիրական հիմնադրամ
L'Œuvre d'Orient
Saint Sarkis Charity Trust
Support Artsakh Association
Ազնավուր հիմնադրամ
Ալբերտ Սարգսյան
Ալեքսանդր Օհանջանյան
ԱԿԲԱ ֆեդերացիա ՓԲԸ
Ամառային Այգի ՍՊԸ
Այրուձի հեծյալ ակումբ ՍՊԸ
Ավետ Միրաքյան
Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան
Արա Թանակ
ԱրարատԲանկ
Արաքս Արաքելյան
Արեգ Միքայելյան
Արևամանուկ հոգեսոցիալական աջակցության հիմնադրամ
Արթուր Խաչենց
Արթուր Քալփաքչյան
Արմեն Մխոյան
Արմեն Վաչենանց
Արմինե Գրիգորյան
Արսեն Ծամիլյան
Արտակ Չաքմիշյան
Արտաշես Կազախեցյան
Արփի Վարդանյան
Արփինե Մկրտչյան ԱՁ
Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ
Գայանե Թևոսյան
Գայանե Կիրնոսովա
Գառնիկ Մելիքսեթյան
Գարիկ Սարոյան
Գևիկ Բաղդասարյան
Գոռ Նահապետյան
Դար կրթության աջակցության բարեգործական հիմնադրամ
Դար տարածաշրջանային զարգացման և մրցունակության հիմնադրամ
Դենիս Վասիլենկո
Դիլիջան ազգային պարկ ՊՈԱԿ
Դինա Դուլգերյան
Դմիտրի (ազգանունը նշված չէ)
Ելենա Մակարովա
Եվա Կիրխմայեր Բիլիչ
Եվգենյա Պատուրյան
Զինա Հարությունյան
Զոյա Աղաբաբյան ԱՁ
Էդել Հովնանյան
Էդուարդ Գևորգյան
Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան ԲԲԸ
Ժասմեն (ազգանունը նշված չէ)
Լաուրա Ծահնազարյան
Լարա Սարգսյան
Լիլիթ Ասրյան
Լուսինե Ավանեսյան
Լուսինե Մարգարյան
Խաչատուր Գրիգորյան
Խարեն Մուսայելյան և Մարին Մաուրեր
Կապանի երիտասարդական կենտրոն ՀԿ
Կարագյոզյան հիմնադրամ
Կենաց Ծառ Տրիո
Հայ օգնության միություն
Հայ-խորվաթական համայնք
Հայկ Պետրոսյան
Հայկ Սաֆարյան
ՀԲԸՄ
Հովհաննես Ծիրազի տուն-թանգարան
Հովնանյան ընտանեկան հիմնադրամ
ՀՕՄ բժշկական շրջանավարտների միություն
Մաթիլդա Դիաս
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գյումրու հայորդյաց տուն
Մասիս Արաքելյան
Մարիա Ժոգ
Մարինա Լիբիկ
Մարինա Հովհաննիսյան
Մերձավոր Արևելքի հիմնադրամ (Հայաստան)
Միխայիլ Այանյան
Միխայիլ Խաչաբեկյան
Յուրի Բալույան
Նարեկ Ստեփանյան
Նարինե Աղաբալյան
Նարինե Օկոնյան
Նյու Թեքն ՍՊԸ
Ծանթ Մարդիրոսյան
Ոզնիների այգի ռեստորան
Ջորջիկ Անջարգոլյան
Ռոբերտ Արաքելյան
Սերգեյ Ֆիլիմոնով
Սուսաննա Աղաջանյան
Սուրեն Տոնոյան
Վալենսիա ՀՁ ՍՊԸ
Վասիլի Բարդադիմով
Տաթևիկ Բաբայան
Տատյանա Լոպարևա
Տիգրան Լուտտից
Քրիստինե Սարգսյան
Օրրան բարեգործական ՀԿ
ՖՖԱ տեխնիկական կենտրոն ակադեմիա ՓԲԸ